# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքների (1-ին փուլ 2-րդ մաս) ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 11.10.2019թ. N 667/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.10.2019թ. ժամը 16-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Գրիգորյանը, Կ.Բայբուրտյանը և քարտուղար Ս.Հարությունյանը:

**Օրակարգ**
**Հայտերի բացման և գնահատման մասին**

- ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը տեղեկացրեց, որ ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգին մասնակցելու համար ՀՀ կառավարության սեպտեմբերի 9-ի N 1253-Ն և հոկտեմբերի 10-ի N 1374-Ն որոշումների համաձայն 14.10.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր էր տրամադրվել՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին (ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան շրջկենտրոն 2601, էլ. փոստ՝ undermoscow89@mail.ru):
- ՀՀ ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2019/11 ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն ներկայացրել է հայտ:
-քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.
**«Մերձմոսկովյան» ԲԲԸ**

| Չափա-բաժինների համարները | Աշխատանքի անվանումը | Առաջարկված ընդհանուր գինը՝ առանց ԱԱՀ-ի | Առաջարկված ընդհանուր գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման աշխատանքների (1-ին փուլ 2-րդ մաս) | 798 200 000 | 957 840 000 | 957 844 400 |

**գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին ներկա էր «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի տնօրեն Ա.Ադամյանը, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման հրավերի 7.5 կետի 1-ին մասի պահանջներին համապատասխան «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին հրավիրել մասնակցելու գների նվազեցման համար բանակցությունների: Բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտին «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ն իր գնային առաջարկը թողեց անփոփոխ:

3. Որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
4. Գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները /գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-առաջին տեղը զբաղեցրած «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և ներկայացնել առաջարկ ընտրված մասնակցին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մնոյան

Անդամներ՝ Ա.Գրիգորյան

Կ.Բայբուրտյան

Քարտուղար՝ Ս.Հարությունյան